

ԻՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Հարեկան գինը 10 բուբլիէս տարվանը 6 բուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Ինքնուրույն գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Կ) Խմբագրատան գրիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мелк“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Կացի կիրակի և սուր օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն կեցողութիւնով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբարանիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները:—Ներքին տե-
սուծիւն: Նամակ խմբագրին: Նամակ խմբա-
գրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսու-
ծիւն: «Temps» լրագրի թղթակցութիւնը հայե-
րի մասին:—Հայտարարութիւններ:—Բանասի-
բական խնդիր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԲ- ՆԵՐ

Մինչև որ Գերմանիան զբաղ-
ված է հրէաների հարցով, իսկ
գերմանական պարլամենտը պատ-
րաստվում է զինուորական նոր
օրէնքի վրա վիճաբանելու և բնե-
լու այն խնդիրը թէ հնարաւոր է
արդեօք սօցիալիստների դէմ հրա-
տարակված օրէնքի գորութեան
ժամանակամիջոցը երկարացնելու,
—Փրանսիական սենատը վիճա-
բանում է բարձրագոյն ուսման ա-
զատութեան օրէնքի վրա:

Չարմանալի է որ ժամանակա-
կից Նւրուպայում ազատութիւն
բառը անխորհր գործ է անվում
ամեն կուսակցութիւններից, որ-
պէս ամենահամոզիչ բառ...

Մի կողմը հաստատում է որ
բարձրագոյն ուսման ազատութիւն
տալ նշանակում է իրաւունք տալ
բարձրագոյն դպրոցներ հիմնելու
երկրի մէջ թէ պետութեանը և
թէ կղերին: Միւս կողմը կար-
ծում է որ եզուիտներին ազատու-
թիւն տալ Ֆրանսիայի մէջ հիմ-
նել և կառավարել իրանց սեփա-
կան բարձրագոյն դպրոցները, նը-
շանակում է սպանել ազատու-
թիւնը:

Եւ ահա վիճաբանութեան ժա-
մանակ միմեանց դիմաց կանգնած
են երկու մեծ հասարակութիւն-
ներ՝ ժամանակակից աշխարհական
հասարակութիւնը և միջնադար-
եան կղերական հասարակութիւ-
նը: Ա իճաբանողները, օրինակ Շէ-
նրլոն մի կողմից և Պելլետան—
միւս կողմից միմեանց երեսին դը-
ցում են ամենամտանելի յանդի-
մանութիւններ: Այսպիսով մեծ
ուսման կատարեալ ազատութեան
մէջ միայն լուսաւոր կողմեր են
տեսնում, ձախակողմեանները ներ-
կայացնում են ամենամութ պատ-
կեր ազգի ապագայ զարգացման,

երբ եզուիտներն էլ իրաւունք կու-
նենան կրթել բարձրագոյնների նոր
սերունդը: Արտաքին հանրապե-
տականները կղերականների պատ-
մական անցեալը յիշելով, նկարա-
գրում են իրանց ճառերի մէջ ե-
կեղեցու անհամբերողութիւնը, նրա
հալածանքները գիտութեան և լոյ-
սի դէմ, հին ինկվիզիցիան,—պահ-
պանողականները յիշեցնում են
հանրապետականներին Փրանսիա-
կան մեծ յեղափոխութեան արած
սխալները, առաջին հանրապետու-
թեանը ընտանիքը ոգին, զխստում-
ները և այլն...

Արդու կողմից էլ փոխադար-
ձապէս թափվում են միմեանց
վրա ամենախիստ մեղադրանքներ,
երկու կողմից էլ վիճաբանելու
ժամանակ հեռանում են բուն
խնդիրը:

Մէկ բան պէտք է խոստովան-
վել. հանրապետականները սաստիկ
վախենում են այն մտքից որ կը-
ղերականներին կը տրվի բարձրա-
գոյն դպրոցներ հիմնելու և պա-
հելու իրաւունքը. նրանք կարծես
նախազգում են որ աշխարհական

համալսարանը, թէ և գիտութեան
կողմից կարող է մրցել կղերական
համալսարանի հետ, բայց բարո-
յական ազդեցութեան կողմից
նոր սերունդի վրա, չէ կարող մըր-
ցել կղերական համալսարանի հետ...

Այո, կղերական եզուիտական
համալսարանը, ինչպէս և առհա-
սարակ եզուիտական բոլոր դըպ-
րոցները հաստատուելով երկրի մէջ,
փոքր առ փոքր կը սկսեն իրանց
ներգործութեան տակ գցել ամ-
բողջ նոր սերունդը, աղավաղել
նրա բարոյական կողմը, ձուլել
նրա սիրտն ու միտքը, ինչպէս
որ այդ հարկաւոր է սուրբ հայ-
րերի անձնական շահերի համար:

Կղերական կուսակցութիւնը չէ
վախենում ուսման ազատութիւ-
նից, որովհետեւ գիտէ թէ ժա-
մանակով, փոքր առ փոքր, կեն-
թարկի իր ազդեցութեանը ժա-
մանակակից Ֆրանսիայի ամբողջ
նոր սերունդը, թէ իր ստոր-
երկրեայ միջոցներով կը յաղթէ
հանրապետութեան ազատ ոգին:

Գ. Ա.

Խ Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԳՐՈՒՄԻ ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բ.

Հետեւեալ աւուր առաւօտեան պահուն, երբ ա-
րեգակի առաջին ճառագայթները տարածվեցան
երկրի վրա, Բայազէթի մէջ և նրա շրջակայքում
բացվեցաւ մի սարսափելի տեսարան: Այժմ պարզ
տեսնվում էր հետեւեալը այն կոտորածի, որ ամ-
բողջ երեք օր և երեք գիշեր կատարվել էր բար-
բարոսի ձեռքով: Քաղաքում տիրում էր գերեզմա-
նական լուսթիւն, որ երբեմն ընդհատվում էր ազ-
նանների կանխնով, որոնք խուճրեցով սաւառ-
նում էին այստեղ և այնտեղ՝ մեռելների ուտելու
համար: Փողոցները այդ դժբախտ քաղաքի ներկա-
յացնում էին խիստ տխուր և սրտաշարժ պատ-
կեր,—տները դարձել էին մոխրի կոյտ... տեղ-տեղ
ծիրութում էին դեռ չը վառված նիւթերը... համա-
րեա ամեն մէկ տան մօտ ընկած էին ձերբերի, ե-
րկասարանների, կնիկների և երկխմների դիակ-
ներ... սոված շները ազատութեամբ քայլ էին տա-
լիս դիակներ, և մարմնալով, գուռալով այնու-
նում էին վանել խուճրեցով ցած իջնող ազաւ-
ներին... Ամեն կողմից, ամեն տնից, ամեն բակից
և շուկայից փչում էր լուծվող դիակների խեղդիչ
գարշառնոտութիւնը...

Այսպիսի մեռեալ քաղաքի մէջ կանգնած էր
Բայազէթի միջնաբերդը և սպասում էր իր ցաւալի
օրհասին...
Քաղաքումը հետզհետէ սաստկանում էր: Սար,
ձոր, բլուր, դաշտ և ամառանայ պատած էին բա-

չիրօզուկների բազմութիւ, մի և նոյն ժամանակ
խառնափնթոր հրտակներով: Բանակները զետեղ-
ված էին առանձին խուճրեցով, և իւրաքանչիւր
խուճրեց մէջ տեսնվում էր չարժում, իրարանցում
և աղմուկ: Կրօնական մողեսանդութիւնը, խառն-
ված զինուորական անդժութեան հետ, անցնում
էր բարբարոսութեան ամեն շափից և սամանից:
Մարդը, գազան դարձած, կեղեքում էր, մահա-
նում էր իր նմաններին...

Արևիկից կշտանալուց յետո, նրանք սկսել էին
այժմ յազգեցնել իրանց ընչափրութեան ծարաւը:
Մի տեղ զետեղ վրա տարածել էին քաղաքումը
հարուստ համարված հայերին և զանազան տան-
ջանքներով չարչարում էին, որ նրանք յայտնեն,
թէ որտեղ են թագաւոր իրանց փղեկը: Թշուա-
ները լացում էին, աղաղակում էին, ստեղծվել էին
որ ունենէին տուեցին, այլ ևս ոչինչ չէ մնացել:
Նրանց չէին հաւատում, և հօր աչքի առջև երե-
խաներին մօրթում էին, որ ստիպեցնեն յայտնել
իրանց պահեստը: Մի այլ տեղ քրդերը բաժանում
էին դիզված աւարը. նրանց կնիկները սուրբա-
րախ բաժանում էին ձիաների վրա, որ տանեն ի-
րանց տները: Մի փոքր հեռու բաժանում էին հայ
զերիներին, բայց մի գեղեցիկ կնոջ կամ աղջկայ
վրա չէին համաձայնում, վրձում էին և սպասում
էին միմեանց սրբով: Մի ուրիշ տեղում գայլերը,
վայրենի կատուները, գիշակեր թռչունների հետ,
հաւաքված անթաղ դիակների վրա, իրանց առա-
ւօտեան նախած չէին էին անում: Գրանցից ոչ
այնքան հեռու, կրօնաւոր ժամանակակից զինուոր-
ներին շնորհակալութեամբ իր վաղորդեան նա-
մանք էր անում, և արհեստ ձեռքերը դէպի եր-
կինք բարձրացնելով, փառաբանում էր իր ամբողջ
Ալ-
լահին...

Այդ բոլորը կատարվում էր վառօդից և խա-
րոյկներից բարձրացած ձիւն ու միսի մէջ, որ թանձր
մառախուղի նման պատել էին հօրիզոնը, և ար-
զեղում էին արեգակի ճառագայթների ներս թա-
փանցելուն: Թնդանութիւնը որսում էին, վիթ-
խարի բերդի կողքերը ամբակում էին, բայց նա

անշարժ, բուրները բարձրութեան վրա նստած,
տակաւին արձամարձում էր թշնամու անզարգար
հարուածները:

Բայց մի տեղ ամբողջ բանակի ուղարկութիւնը
գրաւել էր մի մարդ: Նա երբեմն թռչկոտելով,
երբեմն ծափ տալով, անցնում էր բանակի միջից,
և մի և նոյն ժամանակ կղանկում էր մի այսպի-
սի յիմար քրդերէն երգ.
«Պատաւ տաւոր գորտ դարձաւ,
«Ղորտ դարձաւ, ծովը մաւ,
«Մոլից աւազ դուրս հանեց,
«Աւազը ոսկի դարձաւ.
«Սկսին տուեց մի այծ առեց,
«Աղաղկի, ըստտ այծ առեց,
«—Աձիկ, այծիկ, ջան այծիկ,
«Չանս թեղ դուրս, այծիկ,
«Այս, ինչու դու եղար
«Այսպէս ըստտ ու կաղկի...»

—Ինչեթ... ձայն էին տալիս ամեն կողմից
քրդերը, և հաւաքվելով նրա շուրջը, ստիպում էին
կրկին իր երգը:

Եւ իրաւ, այդ մարդը խնկ էր, կամ գոնէ
այսպէս ձեռացնում էր իրան: Նա հազված էր այն
կերպով, որպէս հազվում են մեզ մօտ լարախա-
ղացների օգնականները, որոնք կոչում են ատակի
մասխարայ, և որոնք լարի ներքեւում գանազան
տեսակ խեղդատակութիւններով ծիծաղեցնում են
հանդիսականներին: Նոյնը անում էր և այդ խն-
թը: Նա մի բարձրաստակ երիտասարդ էր վայ-
րենի դէմքով, զլիւն դրած ունէր հին թաղիքի կը-
տր վերջանում էր քառակուսի ձեւով, և իւրաքան-
չիւր անկրկնից քար էին ընկած մի-մի փոքրիկ
զանգակներ, որոնք նրա ամեն մի շարժմանը
զննզննում էին և աննորոշանակ ձայներ էին հա-
նում: Երեսը մրտած էր կոշկաներով, օրի վրա
զանազան ուղղութեամբ քաշված էին զանազան
գոյներով գծեր,—կարմիր, դեղին, կապույտ և այլն:
Բացի գրակից, ամբողջ հագուստը մի կտորից էր
բաղկացած. դա զինուորի քրքրված մի վերարկու

էր, որի մէջ փաթեթված էր նա բոլորովին մերկ
մարմնով: Մէջքը պնդած էր մի թփի կտորով, որ
գտնի տեղ էր ծառայում: Ուրեքը բորիկ էին,
ստանալները չունէր:

—Ապա էլի նման մէկ գաւ, ասում էին նրան:
Ինչեթ մասերը կոխում էր կանանցի մէջ,
կառնում էր, բերանը լայն բաց էր անում, և որ-
քան ձայն ունէր, սկսում էր էլի նման գաւ:
Բազմութիւնը ծիծաղում էր և ամեն կողմից ձգում
էին նրան պնձէլ դրամներ: Նա վեր էր առնում
դրամները, զարմացած նայում էր նրանց վրա, և
մի կողմ էր ձգում, ասելով, թէ ինձ հաց տուե-
ցէք: Նրան տալիս էին հաց, առնում էր, և անա-
ղին պատահելով իրանք զննելով, առանց ծամե-
լու կուլ էր տալիս:

—Գու, երևի, արլի նման պարել ևս գիտես,
ասում էին նրան,—ապա տեսնե՞ք քո հունարը:
Ինչեթ սկսում էր զանազան անձուկի շարժ-
մունքներ անել, չորս թափկների վրա սողալ,
ստները բարձրացնել, ձեռքերի վրա կանգնել, և
ուրիշ տեսակ-տեսակ յիմարութիւններ անել:
Մի ամբողջ օր խնկը մնաց քրդերի բանակի
մէջ. զուարճացնում էր բոլորին, խուսում էր քրդ-
զերէն որպէս մի բուրգ, հայտնում էր, անիծում
էր ասուներին. գոռում և գոչում էր, թէ բոլոր
զաւաւրներինս պէտք է կոտորել: Մինչև կէս գի-
շեր նրա ձայնը ամեն կողմից լսելի էր լինում: Բայց
միւս առաւօտեան խնկին բանակի մէջ էլ ոչ ոք
չը տեսաւ...

Գ.

Միջօրեի արեգակը սաստիկ այրում էր. սոթը
խեղդելու չափ անտանելի էր: Որպէս այն ժամն
էր, երբ ճանապարհները դատարկվում են ուղե-
ւորներից, և ամեն մարդ քաշվում է մի հովանա-
ւոր տեղ, զովանալու, և մի փոքր ազատ չունչ
առնելու համար: Նոյն ժամուս Բայազէթից դէպի
Ալաշկերտի կողմերը տանող ճանապարհով միայ-
նակ գնում էր մի մարդ: Հանապարհը ոլոր-ուլոր
պտոյտներով անցնում էր լեռների միջով, և բարձ-
րաւթիների անդադար ելեկշններ սաստիկ զը-